

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ
(Ս. Էջմիածին, 31 դեկտեմբեր 1993 թ.)

Աստվածային տիեզերական տնօրինությամբ, մեր երկրագունդը մեկ անգամ ևս մի պտույտ կատարեց արեգակի շուրջը: Բացվեցին դռները Նոր տարվա, 1994 թվականի:

Այս պահը հանդիսավոր է և խորհրդավոր: Բոլոր ժամանակներում, մարդիկ դիմավորել են Նոր տարին ուրախությամբ, նոր հույսերով, նոր երազանքներով, նոր աղոթքներով:

Մենք կուզենայինք այս Նոր տարին դիմավորել ձեզ հետ մեր Տերունական աղոթքով՝

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն:

Այո՛, փրկյա՛ մեզ, Տեր, ի չարեն և մի՛ տանիր զմեզ ի փորձություն:

Հատկապես մեր ժամանակներում, երբ ողջ մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և հԱրցախ, ապրում են դժվարին օրեր և տագնապալի պահեր, այո՛, մենք բոլորս աղոթում ենք, որ Աստված մեր ազգը հեռու պահի ամեն տեսակ փորձություններից և չարի որոգայթներից, փորձություններ ու չարի որոգայթներ, որոնք շրջապատած են մեզ և սպառնում են մեր ազգային կյանքի գոյատևմանն ու խաղաղությանը, մանավանդ Հայոց չքնաղ աշխարհ Արցախում:

Հարազատնե՛ր մեր, այս պահին կուզենայինք լինել ձեզանից ամեն մեկի կողքին ու լսել ձեր վիրավոր սրտերի տրոփյունը, ձեր մորմոքը, ձեր

աղերսը, կուզենայինք լսել ձեր զրկանքների և այս ծանր ձմռան գիշերների՝ ձեր դժվարությունների մասին, մեր պարտքը համարելով մեղմացնել ձեր դժվարությունները, ոգեշնչել ձեզ նոր հույսերով, նոր հեռանկարներով:

Մի՛ երկնչիք, մի՛ վհատվեք, մնացե՛ք հավատարիմ մեր սուրբ հավատքին, մեր Առաքելական Մայր Եկեղեցուն, նեցո՛ւկ կանգնեցեք միասնաբար ու համերաշխ՝ մեր անկախ պետականության, և նույնիսկ ամենածանր կացության մեջ, ձեր ճակատները պահեցե՛ք բարձր ու միշտ հպարտ:

Նոր տարին, այո՛, մեզ բերում է հույսը նոր ապագայի, նոր նվաճումների, նոր հաղթանակների:

«Բա՛ց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան Քո և ցո՛յց մեզ զճանապարհս Քո արդարութեան և խաղաղութեան»:

Սիրելինե՛ր մեր, շնորհավորում ենք ձեր Նոր տարին. «ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»: Ամեն: